

**ՍՈՒՏԻՆ ՍԵՐԸ ԵՒ ՃԵՐՄԱԿԸ**

**ԳՈՅՈՒԹԻՒՆ ՉՈՒՄԻ, ՍՈՒՏԸ ՍՈՒՏ Է**

Այս կանոնը կը գրեմք անոնց համար, որոնք անաստուածաբար սուտ վկայութիւն կու տան: Այս մասին Աստուած խօսելով Մովսէսի հետ, Օրէնքին մէջ գրեց. «Սուտ մի՛ վկայեր»: (Ելք. Ի. 13), ինչ որ մեծ անօրէնութիւն է:


Առաջին՝ ահեղ ու սոսկալի իրողութիւնը այն է, որ նշմարտութիւնը Աստուծոյ անունն է եւ ամէն բանի զարդն ու աշխարհի պայծառութիւնն է: Իսկ սուտ վկան աւերիչ ու կործանիչ է նրշմարտութեան, որովհետեւ կը վկայէ ո՛չ իր տեսածին եւ ո՛չ ալ գիտցածին մասին:

Երկրորդ՝ ուրիշներու մեղքերու ընկեր կ'ըլլայ եւ զանոնք կը հաստատէ իրենց գործած մեղքին ու չարիքին մէջ եւ ինք սատանային բնակարանը կ'ըլլայ, ինչպէս Տէրը ըսաւ. «Ան որ սուտ խօսի, ինքն իրմէ կը խօսի սուտը»: «Ինքն իրմէն այն է, որպէս թէ Աստուած կ'ըսէ. «Սուտը իմա չէ, այլ՝ սատանային, եւ սատանան է անոր հայրը որ ծնաւ սուտը» (Յովհ. Ը. 44) եւ ամէն սուտ վկայ մասնակից է սատանային:

Բոլոր ստախօսները, եթէ ետ չդառնան ու չապաշխարեն, սատանային հետ տանջանքի եւ կորուստի պիտի մատնուին, համաձայն այն խօսքին, թէ «Տէրը կը կորսնցնէ բոլոր սուտ խօսողները» (Սղ. Ե. 7): Ճշմարտախօս բերանը Ս. Հոգիին դուռն է, իսկ ստախօս բերանը դժոխքի դուռն է եւ դեւերու մուտք: Հետեւաբար, ձեր բերանը նշմարտութեան վարժեցուցէ՛ք, որպէսզի Ս. Հոգին բնակի ձեր մէջ:

Մանդակունի

**ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳ**



ՊԱՏԱՐԱԳԻ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՀԱՅՏԱՆՈՒՄԸ

**2.- Պատրաստութիւն ընծաներուն**

Գ.- ԲՈՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ կամ ՀԱՌԱՏԱՅԵԱԼՆԵՐՈՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԵՑՈՒՆ


Ապա բարձրացնելով Աստուածորդոյն պատարագեալ Մարմինը եւ մարդոց համար թափուած Արեան բաժակը, կը դառնայ ժողովուրդին եւ կը թելադրէ.-«Մրբութեամբ ճաշակենք մեր Տիրոջ եւ Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի սուրբ եւ թանկագին Մարմինն ու Արիւնն, որ երկինքէն իջած՝ մեզի կը բաշխուի:

Ասիկա կեանք է, Յարութեան յոյս, եւ մեղքերու քաութիւն ու թողութիւն:

Սաղմոս երգեցէ՛ք Տիրոջ, մեր Աստուծոյն: Սաղմոս երգեցէ՛ք մեր երկնաւոր, անմահ թագաւորին, որ քերովքեական կառքի վրայ կը նստի»:

Այստեղ վարագոյրը...

Շարունակելի



ԲՈՒ ԽՍՐԷՂ ԽՄ ՌՅԲԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Սղ.119.105)

ԺԸ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 9 ՓԵՏՐՈՒՄԱՐ 2025 ԹԻԻ 6

**ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԿՏՈՒՄԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ**  
ԵՍ. 61.10-62.9: Բ. ՏՄ. 2.15-26: ՅԻ. 6.15-21

**ՅԻՍՈՍ ԶՐԻՍՏՈՍԻ ԱՄԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ 6.15-21**

Յիսուս երբ գիտցաւ, թէ պիտի գան զինք բռնութեամբ թագաւոր ընելու, դարձեալ լեռը ելաւ, առանձինն:

Երեկոյեան, Յիսուսի աշակերտները լիճին եզերքը իջան եւ նաւակ մտնելով՝ սկսան երթալ լիճին դիմացի կողմը, դէպի Կափառնատուն: Երբ մթնցաւ, տակաւին Յիսուս իրենց չէր եկած: Լիճը զօրաւոր հովէն կ'ալեկոծէր:

Աշակերտները հազիւ հինգ կամ վեց քիլոմէթր նաւարկած էին, երբ տեսան Յիսուսը, որ լիճին վրայէն քալելով կը մօտենար նաւակին: Բոլորը սարսափեցան: Յիսուս ըսաւ անոնց.- «Ես եմ, մի՛ վախճաք»:

Անոնք կ'ուզէին զինք նաւակին մէջ առնել, բայց արդէն նաւակը հասաւ այն տեղը, ուր կ'երթային:

**ՊԱՀԵՑՈՂՈՒԹԻՒՆ**

Պահեցողութեան առաքինութիւնը մեծապէս կարեւոր է մեր բնութեան համար եւ բազմաթիւ թերութիւններ խոնարհ պահեցողութեամբ կը սրբազրուին: Այդ իսկ պատճառով, երբ Աստուած մարդը ստեղծեց, անոր բնութիւնը խիստ պահեցողութեամբ օժտեց, եւ առաջին մարդուն որպէս առաջին պատուիրան խիստ պահեցողութիւնը պարտադրեց, որ է՝ արգիլուած ծառէն չճաշակել: Եթէ առաջին մարդը պահած ըլլար պահեցողութեան պատուիրանը, առաքինի, անմահ եւ անմեղ կեանք մը պիտի ժառանգէր եւ երկինքի մէջ ամէն տեսակի բարութիւններ պիտի վայելէր: Բոլոր անոնք, որ պահեցին խիստ պահեցողութիւնը, բազմաթիւ վիշտերէ փրկուեցան:

(Յովհան Մանդակունի)

## ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

### ԱՌԱՋԱՒՈՐԱՅ ՊԱՀՔ

Գրիգոր Լուսաւորիչի կողմէ սահմանուած առաջին պահքը կը կոչուի՝ Առաջաւորաց Պահք:

Գրիգոր Լուսաւորիչ, Խոր Վիրապէն ելլելէն ետք 65 օր քարոզեց աղօթքով, կեանքի Խօսքի քարոզչութեամբ հայ ժողովուրդը պատրաստելու համար եւ վերջին հինգ օրերուն համար ծովնաւակները ի յիշատակ Հայաստանի լուսաւորութեան: Այս սկզբունքով, Առաջաւորաց Պահքը համարուեցաւ հայոց առաջին ազգային պահքը:

Առաջաւորաց պահքի ժամանակ եկեղեցւոյ մէջ Գիրք կամ Աւետարան չեն կարդար եւ Պատարագ չի մատուցուիր, որովհետեւ Առաջաւորաց Պահքի մէջ խորհրդաբար Ադամի անկումը կը յիշատակուի: Ադամի ժամանակ «Գիրք եւ Մարգարէք» գոյութիւն չունէին: Ուրբաթ օրը կը կարդացուի Յովնանու մարգարէութիւնը՝ Նինուէի փրկութեան համար:

Առաջաւորաց Պահքի Շաբաթ օրը՝ Ս. Սարգիս գորավարի յիշատակն է: Ումանք, Առաջաւորաց Պահքը կը շփոթեն Ս. Սարգիսի տօնին հետ եւ թիւրիմացաբար կը կոչեն Ս. Սարգիսի պահք: Եկեղեցական օրէնքով սուրբերը պահքի օրեր չունին, հետեւաբար՝ Ս. Սարգիս եւս պահք չունի:

**Հաւատքով լեցուն ծումապահութիւն կը մաղթենք բոլոր անոնց, որոնք Առաջաւորաց Պահքի առիթով ծումապահութիւն կը կատարեն, կ'աղօթենք առ Աստուած եւ կը խնդրենք հաւատքի զօրութիւն եւ մեղքերու թողութիւն:**

## ՀԱՐՅՈՒՄ ՊԱՏԱԽՍԱՆ

**Մեր Տէրը Յիսուս Քրիստոս ի՞նչ բնութեամբ ծննդ ապահովեց մասին:**

Յիսուս Քրիստոս իր բառաստեղծ ծննդապահութեամբ ցոյց տուաւ, թէ պահեցողութիւնը անհրաժեշտ է հոգեւորապէս գորանալու եւ սատանայի որոգայթներուն դէմ դնելու համար: Իսկ լեքան Քարոզի ընթացքին պատուիրեց ըսելով. «Երբ ծով պահէք, կեղծաւորներու պէս տրտմած մի՛ ըլլաք, որոնք կ'աւրեն իրենց երեսը, որպէսզի մարդոց ցոյց տան, թէ ծով կը պահեն: Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, այն է անոնց վարձքը: Սակայն դուն երբ ծով պահես, օձէ՛ գլուխդ եւ լուս՛ երեսդ, որպէսզի մարդոց պահեցողի պէս չերեւիս, այլ՝ Հօրդ ծածկապէս եւ Հայրդ, որ կը տեսնէ ծածուկը՝ պիտի հատուցանէ քեզի»: (Մատթ. 2. 16-18):

Առաքելներն ալ ծով կը պահէին: «Գործք Առաքելաց» գիրքէն եւ առաքելական թուղթերէն կ'իմանանք, թէ անոնք յաճախ ծննդապահութեամբ կ'աղօթէին, իրենց մարմինը կ'ընկնէին ու հսկումներ կը կատարէին հոգեւորապէս գորանալու եւ Սուրբ Հոգւոյն շնորհներուն արժանանալու համար:

Պօղոս Առաքելը իր թուղթերուն մէջ կը յիշէ, թէ ինք ծննդապահութիւն եւ հսկում կը կատարէ:

### ՈՍԿԵՂԷՆ ԽՕՍՔ

Ինծի եկէք դուք բոլորը, յոգնածներ ու բեռնաւորուածներ, եւ ես հանգիստ պիտի տամ ձեզի: Ձեր վրայ առէք իմ լուծս եւ ինձմէ սորվեցէք, որովհետեւ հեզ եմ եւ սրտով խոնարհ, եւ դուք ձեր հոգեկան հանգրստութիւնը պիտի գտնէք, քանի իմ լուծս դիւրաւ տանելի է, եւ բեռս՝ թեթեւ: (Մտթ. 11.28-30)

## Հ ՈԳԵՒՈՐ ՊԱՏ ԳԱՍ

### ՓՈՓՈՔ ՈՐՆԻՄ ՅԻՍՈՒՍԸ ՏԵՄՆԵԼՈՒ

Փափաք ունի՞ս Յիսուսը տեսնելու: «Զակքէոս կ'ուզէր տեսնել թէ ո՞վ է Յիսուսը» (Ղկ 19.3): Զակքէոս շատ բան լսած էր Յիսուսի մասին եւ մէջը պօրաւոր փափաք մը արթնցած էր հանդիպելու իրեն անձնապէս:

### ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ՊԱՍՔ

Անկասկած, որ բոլորս ալ շատ բան լսած ենք Յիսուսի մասին քարուկիչներէն եւ Կիրակնօրեայի մեր ուսուցիչներէն: Վստահաբար շատ բան սորված ենք Յիսուսի մասին գիրքերէն ու դասագիրքերէն: Բայց այս բոլորը արդեօք պատճառ եղա՞ծ են, որ մեր մէջ փափաք արթննայ տեսնելու վայն, ինչպէս արթնցաւ Զակքէոսի մէջ: Մեռա՞ծ է հաւատքը այն անձին որ լսած է Յիսուսի մասին բայց չէ տեսած Յիսուսը: Մեռա՞ծ է հաւատքը այն մարդուն, որ գիտէ Յիսուսի մասին բայց չի գիտեր Յիսուսը: Յիսուսը ճանչնալը՝ իր մասին գիտնալը չէ, այլ՝ իրեն հետ սիրոյ փոխադարձ յարաբերութեան մէջ ըլլալ է: Իսկ այդ յարաբերութիւնը կը սկսի պիտի մեր սրտին մէջ ընդունելով, ինչպէս Զակքէոս ընդունեց:

### Ո՞վ Տէր

Աստուած է մեր ապաւէնն ու զօրութիւնը, ներուժեանց մէջ շուտով հասնող օգնականը: Հետեւաբար մենք չենք վախնար, նոյնիսկ եթէ աշխարհը սարսի, եւ լեռները իյնան ծովերու խորը:

Սաղմոս 46.1-2

## ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒՋԵՍ...

### ՍԱՂՄՈՍ 81

Յնծացէ՛ք Աստուծով, որ մեր պաշտպանն է, ուրախութեամբ աղաղակեցէք մեր հայրերուն Աստուծոյն: Սկսեցէք նուագը, դա՛փ վարկէք, մեղմանույշ քնարն ու տաւիղը հնչեցուցէք: Փող հնչեցուցէք նորալուսնին առիթով, փող հնչեցուցէք լիալուսնին՝ մեր տօնին առիթով: Ասիկա կանոն է Աստուծոյ ժողովուրդին համար, Աստուծոյ հրամանն է՝ Յակոբի սերունդներուն: Իր պատուիրանն է՝ Յովսէփի յետնորդներուն, երբ անոնք դուրս կու գային Եգիպտոսէն:

Լսեցին լեզու մը, որ չէին լսած, եւ որ կ'ըսէ.«Ես բու ուսէդ վար առի բեռը, ձեռքերդ պատազրեցին ստրկական աշխատանքներէն: Ներութեանդ մէջ երբ օգնութեան կանչեցիր՝ ապատեցի քեզի, ամպրոպին մէջէն պատասխան տուի քեզի, քեզ փորձեցի Մերիպայի աղբիւրին քով: Լսէ՛ ինչ, որ կը պատուիրեմ, ո՞վ ժողովուրդ իմ, երանի՛ թէ լսես ինծի, ո՞վ ժողովուրդ Աստուծոյ: Չըլլայ բնաւ, որ օտար աստուածներ ունենաք եւ չըլլայ որ սուտ աստուծոյ մը երկրպագութիւն ընէք: Ե՛ս եմ բու Տէր Աստուածդ, որ Եգիպտոսէն դուրս հանեց քեզ: Լայն բաց բերանդ, եւ պիտի կերակրեմ քեզ, բայց ժողովուրդս մտիկ չըրաւ իմ կոչս Իսրայէլը չուկեց ինծի հնազանդիլ: Ուստի ձգեցէք, որ մնան իրենց յամառութեան մէջ, եւ ընեն ինչ որ իրենց կամքը կ'ուզէ:

ՀԱՐՈՒՆԱԿԵՒ ՍԱՂՄՈՒՄԻՆ